

## ՀԱՅ ՄԵԾԵՐԻ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ԼՈԳՈՊԵԴԻԱՅԻ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐ

### Ա. Գ. Գրիգորյան

Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական  
համալսարանի լոգոպեդիայի և վերականգնողական թերապիայի ամբիոնի  
ասիստենտ, մանկավարժական գիտությունների թեկնածու

### Գ. Վ. Մնացականյան

Հայաստանի հանրապետության ֆիզկուլտուրայի և սպորտի վաստակավոր  
աշխատող, հատուկ մանկավարժ, լոգոպեդ

**Հանգուցային բառեր և արտա-  
հայտություններ.** ախտանշաններ, խոսքային գործունեության խանգարում, կանխարգելում, հատուկ շտկողական միջոցներ, դասակարգում, կազմաբնախոսական առանձնահատկություններ:

Լոգոպեդիան, որպես հատուկ մանկավարժության բնագավառ, համարվում է երիտասարդ գիտություն: Այն ձևավորվել է XIX դարի 2-րդ կեսին: Լոգոպեդիան գիտություն է խոսքի խանգարումների, դրանց կանխարգելման, բացահայտման և հատուկ շտկողական միջոցներով դրանց հաղթահարման մասին:

Եզրույթն ունի հունարեն ծագում / logos՝ բառ, խոսք, pedio՝ ուսուցում, դաստիարակում/, որը թարգմանաբար նշանակում է ճիշտ խոսքի դաստիարակում:

Հանդիսանալով մանկավարժական գիտություն՝ լոգոպեդիան ուսումնասիրում է մարդու խոսքի խանգարումների պատճառները, մեխանիզմները, ախտանշանները և խոսքային գործունեության խանգարման կառուցվածքը:

Պատմական փաստերը վկայում են, որ հին Հունաստանում փիլիսո-

փաները և ճարտասաններն իրենց լեզուն ու խոսքը գեղեցիկ դարձնելու համար դիմում էին տարբեր հնարքների՝ նպատակ ունենալով բառերին հաղորդել ավելի գեղեցիկ հնչեղություն և գրավչություն:

Դեմոսթենեսը (մ.թ.ա. IV դ.) հատուկ և տևական վարժությունների միջոցով հաղթահարել է իր խոսքային մի շարք թերությունները՝ կակազությունը, քլվատությունը, նվազածայնությունը և շնչառական խնդիրները:

«Նա դուրս էր գալիս Աթենքից, հեռանում էր մարդկանցից, կանգնում ծովի ափին, բերանը լցնում ավազաքարեր ու երկարատև լեզվական վարժություններ էր անում: Դրանով նա անցկացրեց իր լեզվական արատը» [10, էջ 41]:

Ուսումնասիրելով խոսքային խանգարումների առաջացման պատճառները՝ հարկ է նշել հույն փիլիսոփա և բժիշկ Հիպոկրատի անունը /460-377 մ.թ.ա./, ով պատճառների հիմքը /հիմնականում կակազության/ կապում էր գլխուղեղի ախտահարման հետ: Մեկ այլ հույն փիլիսոփա Արիստոտելը /384-322 մ.թ.ա./ խոսքային խանգարումների պատճառները տեսնում էր

խոսքային ապարատի ծայրամասային անատոմիական կառուցվածքի մեջ:

Այսպիսով, դեռ հնուց խոսքային խանգարումների պատճառները դիտարկվել են երկու ուղղությամբ [10, էջ 41]:

Լոգոպեդիան իր զարգացման պատմության ընթացքում դասակարգվել է մի շարք այնպիսի անվանի մասնագետների կողմից, ինչպիսիք են Ա. Կուսմաուլը, Գ. Գուտցմանը, Ս. Դոբրոգաևը, Մ. Խվատցևը, Ֆ. Ռաուն, ավելի ուշ՝ Օ. Պրավդինան և Ռ. Լալանան:

Կապված լինելով մի շարք գիտությունների հետ՝ լոգոպեդիան որպես գիտություն մշտապես եղել է բժիշկների, հոգեբանների, մանկավարժների ուշադրության կետրոնում: Հայ մանկավարժներն ու լեզվաբանները նույնպես անդրադարձել են այս խնդրին:

Ինչպես նշում է մանկավարժ և արատաբան Ա. Մ. Մինասյանը. «Հայ ժողովուրդը դարերի ընթացքում ստեղծել է բազմաթիվ նյութական և կուլտուրական արժեքներ՝ իր ավանդը ներդնելով համաշխարհային քաղաքակրթության զանձարանը: Դրա մեջ իր ուրույն տեղն ունի հայ դպրոցի և մանկավարժության պատմությունը, որի մասին կարևոր վկայություններ կան Փ. Բյուզանդի, Մ. Խորենացու, Ղ. Փարպեցու, Լեոյի, Խ. Աբովյանի, Բաֆֆու և այլոց աշխատություններում» [8, էջ 20-102]:

Հայտնի է, որ Հայաստանում լոգոպեդական աշխատանքները, որպես հատուկ ուսուցման ճյուղ, իրենց զարգացումն են ստացել 1962-1969 թթ.-ին՝ ունենալով ընդամենը չորս լոգոպեդական կետ հանրակրթական դպրոցներում և մանկական պոլիկլինիկաներում:

Խոսքի խանգարումների, դրանց դասակարգման մասին շատ հակիրճ

և գործի բանիմացությամբ գրում է բժիշկ-արատաբան Բ. Թ. Ասկարյանը. «Դասակարգել խոսքային խանգարումները՝ նշանակում է դրանք տեսակավորել, ապա համադրել կարգերի ըստ բնորոշ հատկանիշների: Դա հնարավորություն կտա ուղղումներ կատարել երևույթների մեկնաբանության մեջ, որով կստացվեն դասակարգման ավելի ճշտված տարատեսակներ» [5, էջ 89-90]:

Հայ մանկավարժության պատմության մեջ հնչյունների դասակարգման, դրանց ճիշտ արտաբերման և արտաբերական ապարատի օրգանների տարբեր դիրքերի նշանակության մասին խոսել են դեռևս անվանի գրողներ և մեծանուն մանկավարժներ՝ Խաչատուր Աբովյանը (1809-1848թթ.) և Ղազարոս Աղայանը (1840-1911 թթ.): Խաչատուր Աբովյանը գրում է. «Էն գրերը, որոնք բերնից էնպես են դուրս գալիս, որ պռոշը, լեզուն չէ շարժվում՝ ձայնավոր են ասում. զոր օրինակ ա, է, ու, ի, օ, բայց մյուս մնացյալքը, որովհետև ասելիս՝ կամ պռոշնա՝ շարժվում, կամ լեզուն կամ բողազը՝ նրանց բաղաձայն են ասում. զոր օրինակ բը, վը, գը» [1, էջ 13-27]:

Ուսումնասիրելով երեխաների լեզվական արատները՝ Ղ. Աղայանը յուրովի է մեկնաբանում. «Կակազները միևնույն ձայնը մի քանի անգամ են կրկնում. օրինակ՝ պիտի ասեն **ջուր**, բայց չեն կարողանում մեկ անգամից ասել, ասում են **ջը-ջը-ջը-ջուր**: Մի անգամ **ջը** ասելու տեղը երեք անգամ, չորս անգամ կրկնում են **ջը** ձայնը: Այնպես կակազներ կան, որ խիստ շատ են կրկնում, մանավանդ երբ որ բարկացած են լինում: Օրինակ՝ պիտի ասեն **ես**, ասում են **ե-ե-ե-ես**: Այսպես են լալկան երեխաները, երբ որ խոսելիս հեկեկում են: Չմայելով, որ կակազները

մեզ պես չեն խոսում, բայց մենք իմանում ենք, թե նոքա ինչ են ասում: Թոթովների ասածներն էլ ենք իմանում, երեխայոց ասածներն էլ, մենք մինչև անգամ մնջերին էլ ենք իմանում, թե պետ նորանք չեն խոսում: Մենք լեզվով ենք խոսում, այնպես չէ՞, բայց եթե բերաններս խփենք, մի՞թե կարող ենք խոսել... Բայց հենց բերաններս էլ, որ լայն բանանք, բայց պոռոչներս չչարժենք, մի՞թե կարող ենք խոսել... Ուրեմն բերաններս, որ լայն բանանք ու պոռոչներս չչարժենք, էլի չենք կարող խոսել, այլ կլսվի միայն մի **ա**: Նայեցեք՝ հիմա պոռոչներս կլորացնեմ ու այնպես ձայն հանեմ, տեսնենք՝ էլի՞ **ա** դուրս կգա թե՞ ուրիշ բան. ի՞նչ լսեցիք՝ **օ**... Ուրեմն խոսելիս պոռոչներն էլ լեզվի պես պիտի շարժեն, որ տեսակտեսակ ձայներ դուրս գան: Բայց կիսվատա՞ք, որ ես ասեմ՝ ատամներն էլ պիտի օգնեն: Եթե ատամներս ամուր սեղմեմ, էլի չեմ կարող մաքուր կերպով ասել **Սարգիս, հաց, ձայն, ծառ**: Ուրեմն թոթովները կամ երեխայքը, որ լավ չեն խոսում, դորա պատճառն այն է, որ նոքա դեռ լավ չգիտեն իրենց լեզվի, պոռոչների, ատամների ուղիղ բանացնելը: Իհարկե, մեզանից ոչ ոքի չեն սովորեցնում դորանց ուղիղ բանացնելը, այլ ամեն մարդ ինքն իրան է սովորում, բայց ով որ մի անգամ սկսում է սխալ սովորել, նա էլ չի կարողանում հեշտությամբ շտկել յուր սխալը» [2, էջ 107-109]:

Վերլուծելով Ղ. Աղայանի դիտարկումները՝ միանշանակ կարող ենք ասել, որ նա հստակ պատկերացում է ունեցել տարաբնույթ խոսքային խանգարումների, արտաբերական կառույցի յուրաքանչյուր օրգանի լիարժեք գործառնության մասին և կարևորել է դրանց դերը մայրենի լեզվի հնչյունների արտաբերման համար: Եվ ան-

գամ մատնանշում է այդ սխալների շտկման դժվարությունը՝ կարծես թե տեսնելով այդ գործով զբաղվող հատուկ մանկավարժին՝ լոգոպեդին:

Այնուհետև Ղ. Աղայանը առաջարկում է վանկերի, ձայների և բառերի փոխհարաբերության, դրանց ճիշտ արտասանման և գրելու փոխհարաբերությունների ու ճիշտ գրելու կանոնների ուսուցման, ինչպես նաև թլվատության և կակազության վերացման իր մտքերը, մեթոդներն ու ձևերը: Աղայանը ուսուցիչներից պահանջում է թույլերին, կարդալուց վախեցածներին և խոսքի արատ ունեցող երեխաներին պահել ուշադրության կենտրոնում և առաջին հերթին նրանց հարց ու փորձ անել: Խիստ կարևոր է, որ նա մեծ նշանակություն է տալիս վարժությունների միջոցով դժվարությունները հաղթահարելուն և ճիշտ արտասանած բառերն ամրապնդելուն, ընդ որում՝ զգուշացնում է, որ առանց շտապ քայլերի պետք է լավ վարժեցնել վանկերը կազմելու, հնչյունները արտաբերելու համար [2, էջ 107-109]:

Աղայանի տեսության մեջ ոչ բոլոր դիդակտիկ սկզբունքներն են մեկնաբանված, բայց տրված են դրանց կիրառման պայմանները: Նա գտնում էր, որ ուսումնական գործընթացը պետք է լինի համակարգված ու հաջորդական, մատչելի ու զմնական, սովորողների ակտիվությամբ ու ինքնուրույնությամբ, յուրացումը՝ հաստատուն, գիտակցված ու տրամաբանական:

Կարծում ենք՝ անվիճելի է այն փաստը, որ Ղ. Աղայանը, համարվելով «ժողովրդական ուսուցչի պայծառ տիպար», մեզ է փոխանցել հատուկ մանկավարժին արժանի ժառանգություն, որն այսօր էլ կարող է իր ուրույն տեղը գրավել մեր աշխատանքներում:

Հայ ժողովուրդն ունի և աշխարհի շատ ժողովուրդներին կարող է զարմացնել իր մանկավարժական պատմագիտական հարուստ ժառանգությամբ: Խոսքի խանգարումների, դրանց կանխարգելման կամ շտկման գործընթացին անդրադաժել են մի շարք հեղինակներ, մանկավարժներ և բժիշկներ: Շարունակելով մեր ուսումնասիրությունները՝ հասանք 13-րդ դար:

Այս դարաշրջանի հայտնի դեմքերից է Վարդան Արևելցին: Նա ծնվել է մոտավորապես 1197-1200թթ. Գանձակում, մահացել է՝ 1271թ. Խոր Վիրապում: Վ. Արևելցին մեզ ներկայանում է որպես հասարակական և պետական գործիչ, մանկավարժության և մշակույթի երախտավոր, պատմագետ, աշխարհագետ, իրավագետ, քերականագետ, իմաստասեր, բարոյախոս և խմբագիր: Նրա կատարած թարգմանություններն ապացուցում են, որ նա տիրապետել է մի քանի օտար լեզուների: Նախնական կրթությունը ստացել է Նոր Գետիկի վանքում, որտեղ աշակերտել է Մխիթար Գոշին:

Վարդան Արևելցին գործել է Կիլիկյան Հայաստանում Հեթում Ա թագավորի և կաթողիկոս Կոստանդին Ա Բարձրբերդցու օրոք: Մասնակցել է Սսի 1243-ի ազգային-եկեղեցական ժողովին և այնտեղ սահմանված կանոնները 1245-ին բերել մայր Հայաստան՝ արևելյան վարդապետներին: 1248-ին դարձյալ անցել է Կիլիկիա՝ իր հետ տանելով արևելյան վարդապետների պատասխան թուղթը, մասնակցել է Կիլիկիայի հայկական պետության քաղաքական և հասարակական կյանքին, Կաթողիկ եկեղեցու ու Բյուզանդիայի ուղնձգությունների դեմ պայքարին: Կոստանդին Ա Բարձրբերդցի կաթողիկոսի համագործակցությամբ գրել է Հայաստա-

նի բնակչությանն ուղղված «Թուղթ խրատական»-ը և Հռոմի պապի դավանաբանական գրության պատասխանը: 1252 թ-ին վերադարձել է Հայաստան, գումարել Հաղպատի և Ջազավանի եկեղեցական ժողովները, հիմնել Մաղմուսավանքի, Թեղենյաց մենաստանի, Աղջոց վանքի, Խոր Վիրապի, Հառիճի վանքի, Խորակերտի դպրոցները: Վարդան Արևելցին ճառ է արտասանել Հառիճի վանքում՝ նվիրված Մարիամ Աստվածածնին, իսկ Խորակերտի վանքի ճակատին արձանագրված է նրա անունը՝ որպես համբավավոր վարդապետի [3, էջ 147-151]:

Վարդան Արևելցին մեծ ուշադրություն է դարձրել երաժշտության տեսության և գեղագիտության հարցերին, անդրադարձել ծայնեղանակների մասին ուսմունքին և երաժշտության զգայական մեծ ազդեցությանը: Նա հայտնի է նաև որպես բեղուն շարականագիր: Վարդան Արևելցուն են վերագրվում Խաչին նվիրված ճառեր, «Կանոնական բանս» գրվածքը, առակներ, ընդարձակ և համառոտ տարբերակներով պահպանված «Աշխարհացոյց»-ը:

Վարդան Արևելցին թողել է մատենագիտական հարուստ ժառանգություն՝ պատմական, մեկնողական, քերականագիտական բնույթի երկասիրություններ, բազմաթիվ ճառեր, ներբողներ, խրատներ, թղթեր [3, էջ 147-151]: Նա հեղինակ է նաև քերականական երկու աշխատությունների՝ «Մեկնութիւն քերականի» և «Վասն բանին մասանց», որոնք գրված են ժամանակի խոսակցական լեզվով: Առաջինը, որը գրել է Հեթում Ա-ի պատվերով, Դիոնիսիոս Թրակացու քերականության հայերեն թարգմանության մեկնությունն է, իսկ երկրորդը՝ հայոց լեզվի շարահյուսության սկզբունքներ-

րի նկարագրությունը:

Հեղինակը քերականությունը զատում է ճարտասանությունից ու տրամախոսությունից՝ այն ներկայացնելով որպես խոսքի մասերին նվիրված ինքնուրույն գիտություն:

Վարդան Արևելցուն, որպես հասարակական և պետական գործչի, վարդապետի և քերականագետի, իր երկհատոր մենագրությամբ մեզ է ներկայացնում բանասիրական գիտությունների դոկտոր՝ Փայլակ Փանոսի Անթափյանը: Նա երկար տարիներ եղել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգեն Ա-ի գավազանակիր-քարտուղարը՝ կրոնական Մեսրոպ անվանումով: 1959թ.-ին անցել է գիտական աշխատանքի, ղեկավարել է Երևանի Մատենադարանի հայագիտության բաժինը: Ինչպես նշում է Փ. Անթափյանը՝ անդրադառնալով քերականությանը, Վ. Արևելցին իր նպատակն է համարում խոսքի կոկումն ու կռումը:

«Մեկնութիւն քերականի» երկի մեջ տեղ են գտել տառի, գրի, ծայնավորների, բաղաձայնների, հնչույթների և դրանց արտաբերման հետ կապված ուշագրավ խորհուրդներ: Հեղինակը ծանոթ է յուրաքանչյուր հնչյունի արտաբերման եղանակին և կարողանում է ճշտությամբ ներկայացնել այն՝ նշելով շրթունքների, քիմքի, կոկորդի, լեզվի մասնակցության չափն և դիրքը:

Վարդան Արևելցու «Մեկնութիւն քերականի» աշխատությանն է անդրադարձել բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր՝ Լ. Գ. Խաչերյանը: Իր ծավալուն աշխատության մեջ մեզ համար ուշագրավ է այն փաստը, որ դեռևս 13-րդ դարում Վարդան Արևելցին հնչույթաբանական վերլուծություն կատարելիս հայերենի հնչյունները բնութագրում է ելնելով նրանց արտասանական տե-

ղից և բնախոսական /ֆիզիոլոգիական/ առանձնահատկություններից [7, էջ 32-48]:

Նա նշում է. «Նուրբն բարակն է և նաւարն, որ մերկ և ցոփ ծայն հանէ և չտանջէ կարի զբերանն ի ծայնելն»: Կամ՝ «Ստուարն հաստն է և թանձրն, որ ի գանչելն զբերանոյն մասունսն աւելի յիրեար բերէ և դժուարաւ հանէ զծայնն»: **Ք**-ի և **գ**-ի հնչույթային տարբերությունը բացատրելիս Վ. Արևելցին ասում է. «Այս երկու պատճառաւ է դրած. մի՛ որ զլծորդսն ցուցանէ, և երկրորդ՝ որ զհաստն բաժանէ: Վասն զի այն, որ լեզուին ծայրին գայ ի յասելն և շրթանցն ծայրին, նա այն նաւար է: Եւ որ լեզուին միջաւքն ասի կամ լնդաւքն՝ այն հաստ և թանձր, որպէս թոն և կամ քէն: Իսկ որ լեզուին տականքն ասի՝ այն միջակ է, որպէս գիմն և կամ կենն և այլ այսպիսիք»: Ըստ Լ. Խաչերյանի՝ Վ. Արևելցու համար հնչույթների էության բացահայտումը նրանց արտաբերական տեղով որոշելը ոչ թե պատահական՝ անցողիկ նշանակություն է ունեցել, այլ ելակետային հաստատ համոզմունք և հայեցակետ: Այսպես, **ձ**-ի հնչույթային ճիշտ արտաբերումը որոշելու համար խորհուրդ է տալիս կողմնորոշման համար ելնեն **ս**, **գ**, **ց** հնչույթների հարաբերությամբ, արտաբերական տեղից. «Արա ընտրութիւն, ով ուսումնասէր, և բաժանեա լեզուդ և բերանովդ, թե որ են, որ լեզուին ծայրն առնու, եւ կամ զոր՝ մէջն, կամ՝ որ են , որ տակաւք լեզուին ասին կամ շրթամբքն և կամ լնդաւքն» [4, էջ 123-127]:

Վ. Արևելցին խոսում է շրթունքների մասին. խոսքը վերաբերում է շրթնային **բ-փ-օ-ու-ի-մ** հնչյուններին, որոնց ճիշտ կամ սխալ արտաբերելը կապված է շրթունքների կամ լեզվի մարդաբանական (անատոմիական)

կառուցվածքի, նրա ճկունության և շարժունակության հետ: Հեղինակը նկատել է, որ որոշ մարդկանց խոսքն ունեցել է շեղումներ: Առանձնակի շեշտվում է լնդերի դերը:

Ենթադրվում է, որ այս դեպքում Վ. Արևելցին նկատի է ունեցել վերին և ստորին ծնոտների կառուցվածքները: Նա հատուկ շեշտում է քիմքը՝ նկատի ունենալով կոշտ և փափուկ քիմքերի մարմնակազմական խանգարումները և դրանց հետևանքով առաջացած հնչարտաբերական խնդիրները: Նշելով մարդու կոկորդը և նրա նշանակությունը՝ հեղինակը նկատի է ունեցել հնչյունների արտաբերման գործընթացում մարդու շնչառության և ծայնալարերի դերն ու նշանակությունը:

Ձերժ մնալով մեկնաբանություններից՝ կարելի է ասել, որ դեռևս 800 տարի առաջ Վ. Արևելցին հիմք է դրել լոգոպեդական այնպիսի գիտելիքների, որոնք մենք կիրառում ենք մեր այսօրվա աշխատանքներում:

Կարծում ենք՝ այսուհետև անդրադառնալով լոգոպեդական գիտության պատմական անցյալին, Հիպոկրատի (460-377 մ.թ.ա) և Արիստոտելի (384-322 մ.թ.ա) անունները տալուց հետո հպարտությամբ կարող ենք նշել մեր

անվանի գիտնական, մանկավարժ-վարդապետ՝ Վարդան Արևելցու անունը, որը դարեր անց իր թողած հարուստ ժառանգությամբ հարստացրել է հատուկ մանկավարժության՝ լոգոպեդիայի պատմությունը:

Ուսումնասիրելով եվրոպական երկրների և նախկին խորհրդային հանրապետությունների հատուկ մանկավարժության պատմությունը՝ վստահ կարելի է ասել, որ շնորհիվ Վարդան Արևելցու կատարվել է արժեքավոր ներդրում, ինչը թույլ է տալիս մեզ հայկական լոգոպեդական գիտության հիմքերը տեսնել դեռևս միջին դարերի Կիլիկյան Հայաստանում:

Եթե Մովսես Խորենացին համարվում է մեր առաջին պատմիչը, առաջին աշխարհագետը, Մխիթար Հերացին՝ առաջին բժիշկը, իսկ Մխիթար Գոշը՝ առաջին դատաստանագրքի հեղինակ, ինչու՞ Վարդան Արևելցուն չհամարել լոգոպեդական գիտության նախահայր:

Այսպիսով, վերհանված պատմական ստույգ տվյալները կարող են նշանակալի ներդրում համարվել հայկական հատուկ մանկավարժության պատմության բնագավառում:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբովյան Խ. Ա. Երկերի լիակատար ժողովածու, Հտ. 5. Երևան, 1950, էջ 13-27:

2. Աղայան Ղ.Ս., հատոր 4-րդ, Երևան, 1969, էջ 107-109:

3. Անթափյան Փ. Փ. «Վ. Արևելցի գիրք» – Ա - ՀԱՀԳ.Ա. Երևան, 1987, էջ 147-151:

4. Անթափյան Փ. Փ., «Վ. Արևելցի գիրք» – Բ - ՀԱՀԳ.Ա. Երևան, 1989, էջ 123-127:

5. Ասկարյան Բ. Թ., Խոսքի խանգարումները մանկական տարիքում, Լույս, Երևան, 1976, էջ 89-90:

6. Բադիկյան Խ.Գ. Հ. Աճառյան «Մարդ և գիտնական», Երևան, 2005:

7. Խաչերյան Լ.Գ., Հայոց համագային Մաշտոցյան համակարգված միասնական և միակերպ ուղղագրության պատմություն, Լոս-Անջելես, 1999, ԱՄՆ, էջ 32-48:

8. Մինասյան Ա. Մ., Անոմալ երեխա-

ների ուսուցում ու դաստիարակություն,  
Հայաստան, Երևան, 1973, էջ 20-102:  
9. Մինասյան Ա. Մ., Դեֆեկտոլոգիա-

յի հիմունքներ, 1980, էջ 192-208:  
10. Логопедия Л.С., Волкова - 2007  
г. стр. 41

## **РЕЗЮМЕ**

### **ОСНОВЫ ОТЕЧЕСТВЕННОЙ ЛОГОПЕДИИ В НАБЛЮДЕНИЯХ ВЕЛИКИХ АРМЯНСКИХ УЧЕНЫХ И ПЕДАГОГОВ**

**А. Г. Григорян**

ассистент кафедры логопедии и восстановительной терапии Армянского  
государственного педагогического университета  
им. Хачатура Абовяна, кандидат педагогических наук

**Г. В. Мнацаканян**

заслуженный работник физической культуры и спорта  
Республики Армения, специальный педагог, логопед

Логопедия как научная сфера всегда была в центре внимания врачей, психологов и педагогов. Армянские филологи и педагоги не раз обращались к многочисленным проблемам и вопросам логопедии. В статье представлены взгляды известных армянских педагогов относительно различных речевых расстройств. В истории армянской педагогики классификация звуков, их правильное произношение и различные положения артикуляции упоминались еще Х. Абовя-

ном (1809-1848) и К. Агаяном (1840-1911гг), которые являлись великими писателями и учеными своего времени. Исследования привели нас к истокам 13-го века. Еще тогда Вардан Аревелци внес ценный вклад в изучение причин неправильной артикуляции звуков, роли дыхания и голосовых связок человека, что в свою очередь дает нам право аргументировать, что основы отечественной логопедии были заложены еще во времена средневековой Киликийской Армении.

## **SUMMARY**

### **FUNDAMENTS OF A NATIVE SPEECH THERAPY IN OBSERVATIONS OF GREAT ARMENIAN SCIENTISTS AND PEDAGOGUES**

**A. G. Grigoryan**

assistant of the Chair of of Speech Therapy and Rehabilitation  
Khachatur Abovyan Armenian State Pedagogical University Candidate of  
Pedagogical Sciences

**G.V. Mnatsakanyan**

Honored Worker of Physical Culture and Sports of the Republic  
of Armenia, Special educator, speech therapist

Doctors, psychologists and pedagogues have consistently directed their focus towards speech therapy and its key issues and concerns. This article refers to scientific observations on various speech disorders, made by Armenian scholars and educators throughout the history of Armenian pedagogy. Several decades ago, the classification and correct pronunciation of speech sounds, among other questions, were looked into by such notable writers and

intellectuals as Kh. Abovyan (1809-1848) and G. Aghayan (1840-1911). As early as the beginning of the 13<sup>th</sup> century, Vardan Areveltsi, an Armenian historian, philosopher and translator, made a substantial contribution to the study of causes of incorrect articulation of speech sounds, as well as the role of vocal cords and breathing, thus giving us the right to claim that Armenian speech therapy was first introduced in Cilician Armenia in the Middle Ages.